

լուսաւոր պատկերը տեսնելու կարողութեան հաշիւը
ազգային և զուգահեռ ժողովրդականութեան հիմնա-
դրեր վերջին մի միայն կարծու էր, որպէսզի խլճի
ազատութեան պատրուակաւ չհասկցածը մերժէր
չգիտցածը ծաղրէր և չոր ու ցամաք փրկատու մը
ստեղծէր : Այո՛, չհասկցածը մերժել և չգիտ-
ցածը ծաղրել էր Մարթին Լուտերի գլխաւոր
հանճարը : Երբ չհասկցածը մերժել և չգիտցածը
ծաղրելը՝ խեղացի և լուսամիտ մարդու գործ է :
Նախկին իմաստունք որք պատճառացի նախա-
պատճառք խուզեցին, Բարին և Չարը միայն
տեսան աշխարհի մէջ, Սատերը և Լոյսը նշմու-
րեցին, Չմուռը Ամառուան, Ծերութիւնը Ման-
կութեան, Կեանքը Մահուան հետ բազդատե-
ցին և լսին—Նախապատճառք բարին է, Կեանքը
կուտայ և կ'ոնշացունէ : Մանէսի աշակերտնե-
րը՝ իրարու հակառակող երկու սկզբունք ըլլալ
կարծեցին ատոր մէջ, Զօրօտածրի կէս—հետե-
ւորդ չլրացան այդ հանելուկը լուծել, Երբէք
իրարու հակառակ չին տնեղերական հաւատա-
րակշռութեան երկու սկզբունքները : Միակ
սկզբունք մ'է որ զերկուսն իրարու կը հակառակ
կեցունէ, կամ թէ՛ բարին ալ և չարը ձախ կող-
մերն են, այլ դերագոյն բարութիւնը երկուքին
վերեւ կեցած է : Չարը ի գործ կ'ածէ ի յող-
թութիւն բարին, բարին ի դործ կ'ածէ ի տղթ
չարին : Ներգրանակութեան սկզբունքը՝ միու-
թեան մէջն է, և այս է որ անզոյգ թիւին այն-
քան զօրութիւն կընծայէ թագուն գիտութիւ-
նը և որք գիտութեան ծնունդը կողմ քրիստո-

Սակայն գիտեմք որ Վաղբթ «Հայաստանի բարեկարգութիւն» խօսքին վրայ այդ աչքով չնայիր, մեր հասկացածին պէս չհասկնար, գիտեմք որ նա ուրիշ կերպ կը մըռնէ լորտերու վիճաբանութեան հետեւանքը : Պուղարք և Պուղարիա ըսելով տեսանք թէ հետեւանքն ինչ եղաւ, կըսէ նա ըստ գիտելի : Բայց Վաղբթ զուրկ է լուրջ դատողութենէ զոր ունենալ պէտք էր, երբ Հայաստանի Պուղարիսթանի մը ձեռն առնելուն վրայ երկիւղ կը յայտնէր : Պուղարիսթանի վերականգնումին կամ իշխանութիւն առնելուն պատճառը հասկնալը այնչափ դժուար բան մը չէ : Անոր ժողովրդեան կրած սոսկալի շարքը, Ռուսական հովանիին մը անոր վրայ եղած մշտնջենաւորութիւնը, Ռուսական տէրութեան հանրաժանութիւնը նպատակը դիւրաւ մտածել կուտան մարդուս որ Պուղարիսթան մը յարութիւն առնուր : Իսկ Հայաստան մը չինուելու կառկածով օսմանեան պետութեան ուրիշ աւագին կրուստ մը ցցունելը, բարի նպատակի մը չծառայէր : վասնզի դիւրին է մտածելը և պարզապէս՝ կը տեսնուի որ եթէ երբէք լորտերուն՝ Հայոց և Հայաստանի վրայ ըրած խօսակցութեանց հետեւանքը, աւելի հեռին երթալով Հայաստան մը չինուելու յանգի, այդ ալ ոչ թէ Հայոց իրաւունք մը արուած կամ մարդասիրական գործ մը կատարուած ըլլալու համար, հապա միշտ մեզի ծանօթ կամ անծանօթ շահադիտութիւններու համար պիտի ըլլայ : Հետեւաբար Վաղբթի ճիշդը կամ տղայական են կամ չարամտական, երկուքին որն ալ ըլլայ, տաճկական մամլոյ ներկայացուցչաց շարքին մէջ առաջին տեղ մը գրաւող թերթի մը անպատշաճ է :

Անկարեւոր պարագայից տակ միշտ անստամբ բական ցոյցեր նկատելով՝ գովելի հեռատեսութիւն մ'է, բայց տաճկական մամուլը ասկէ 3—4 տարի առաջ երբէք չունեցաւ այդ հեռատեսութիւնը, երբէք չգուշակեց որ և է տխուր հետեւանք մը, հետեւանք՝ որ դարեւրէ ի վեր կատարածանայ տեղի տուած էին պատմագիտաց և քաղաքագիտաց : Հայաստանի կողմը այդպիսի երկիւղ մը եղջերուաբաղ մ'է, վասնզի եթէ Վաղբթի խմբագրողը այնքան միտք չունի մտածելու, օտարազգաց շատերը և մեծագոյն մասը պիտեն որ, սպառուած արեան մը վերջին կաթիլը՝ իր ապագայ սերնդեան գոյութեան համար վերապահած է Հայը, ոչ թէ խռովութեան հրապարակին վրայ թափելու, և եթէ այդ արեան պահպանութիւնը և ազատութիւնը կը պահանջէ ողորմադին, ոչ յանցանք գործած կըլլայ և ոչ ալ իշխանութիւն խնդրած :

Նէուրթիւնը, զի երեքը և եօթը եկեղեցւոյ սըրբադան ձեռք առաջին տեղը կը բռնեն : Երեքը բուն հիմն է որոյ վրայ կանգնած է եկեղեցին, որ երրորդութեան ձեռով կը ներկայանայ : Եօթը մարմին է՝ որով գոյացած է եկեղեցին որ եօթը խորհրդոց ձեռով կը ներկայանայ : Սակայն անգոյգ թուոց ամենակատարաբար երեքն է :

Վարդապետութիւն մը երկնային չլինար ըլլալ մինչև որ ստուգապէս մարդկային չըլլայ, այսինքն մինչև որ մարդկութեան ամենաբարձր իրաւունքը իր մէջ չընդունաւ : Այսպէս քրիստոս զոր մենք Մարդ—Աստուած կը կոչուինք, նա ինքզինքը Որդի—Մարդոյ կը կոչուին : Յայտնութիւնը, մարդուն բանին մէջ տիեզերական իրաւամբ կազմուած և ընդունուած հաւատոյ մեկնութիւնն է : Ասոր համար է որ կըսուի թէ Մարդ—Աստուածին աստուածութիւնը մարդկային և մարդկութիւնը աստուածային է : Մենք այս ամենը փրկութեան պատճառով կըսեմք և ոչ աստուածաբանական և այս ալ երբէք չըլլայ չիր եկեղեցւոյ սրբադան վարդապետութեան, մենք մանաւանդ Աստուծաշնորհիւնը (եթէ ներքին է ասանկ բառ մը գործածել) աւելի կը հասկնամք քան թէ աստուածաբանութիւնը, գիտական իրք գիտութեանց և հաւատոյ իրք հաւատոյ կամ հաւատացելոյ . . . :

Հոս ընթերցողաց ներողամտութիւնը խնդրելով, իւր միջանկեալ, այլ սակայն մեր նիւթին կապակից քանի մը խօսքեր և քննադատութիւն

ԱՐՄԱՆԻ ՎԱՆՔԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Ազգային թերթերու մէջ կարգադրեալ որ, Արմանի վանքին միաբաններէն Մամբրէ տնուն վարդապետ մը 50 ոսկւոյ արժողութեամբ գոյքեր և եկեղեցական սպասներ ծախած տոհմ կը բռնուի Պոլսոյ մէջ : Մեր վանքերու մէջ այս տեսակ ապօրէն գործերը նոր բաներ չեն կարծեմք, սակայն կեդրոնական վարչութիւնը միշտ անփոյթ մնացած է անոնց առջև առնելու մասին : Ամենէ առաջին գործն է ազգին ներքին անկարգութիւնները զսպել : Մինակ իրականութիւնը անորոշ և անյայտ խնդիրներով զբաղելը անխելութիւն է : Ազգին բարիքը մտածելով՝ անոր բարեկեցութեան աշխատիլը գլխաւորաբար ազգային վարչութեան պարտաւորութիւնն է : Ի ճան պատահեցաւ ըսելու որ ազգ—վարչութիւնը պարտաւոր էր վանքերու մէջ իր կողմանէ ազգու և իրազօր վերակացուներ ունենալ և հարկ է որ ունենայ ապառնիին մէջ այս տեսակ անպատշաճ գործերը զսպելու համար : Հարկ չէ միթէ որ իր կառավարութեան և հրամանին տակ եղող վանքերը և ուրիշ ազգային հաստատութիւնք իր վերակացութեան ներքեւ ըլլան միշտ : Հարկ չէ միթէ որ գոնէ տարուէ տարի քննել յանձնախումբեր զրկելով ի վանս ճիշտ և լիովին տեղեկութիւններ առնու ելից և մեղից գոյից և ընչից վրայ : Արմանի վանքին, զոր յոգուածս գրողը լաւ կը ճաննայ, անխելանութեան մասնուիլը մինակ ներքին կառավարութեան յառաջ եկած չէ, այլ ամեն վանահայրի մտերիմ բարեկամ Պոլսեցի ազաներ պատճառ եղած են վանքին անտեղութեանց : Կան շատ հաճի ազաներ՝ որք միշտ սովորած են վանքին հաստատութիւնը անտեղութեան վանքին եկեղեցիին արծաթեայ կանգեղ կամ իրաւ մը ընծայ : Ընծայողին ալ վանքին ազարակէն երեք ոչխար պարգև : Այս է ահա այս վանաց ընթացքը : Արդի վանահայր խորհրէ եպիսկոպոս Ալեքեան, որոյ բազմաթիւ զաւակներն ու փառաւորութիւնը ճանչնալու դժբաղդութիւնն ունեցած է մը իր արեւելայութեան ժամանակ, միաբաններուն առաջինը եղած է վանքին հասցիէ իր զարգաց և ճշգրիտ համար սպառող : Նայողը ո՞վ, հարցունողը ո՞վ, փանի մը տարի առաջ լսեցինք թէ թոշակաւոր վարժարան մը բացուէր է վանքին մէջ, հիմա կըլլեմք որ թէ այդ թոշակաւորութեան ժառանգաւորաց վարժարանք գոյուած են : Մամուլ մը ունէր որով Յոյ մը կը հրատարակէր այդ վանքը հիմա այդ մամուլին ոչ Յոյք կը տեսնեմք և ոչ ուրիշ մէկ հրատարակութիւնը : Միաբանութիւնը ինչով կը զբաղի արդեօք, գիտնալու

ներ ընեմք :

Եւեակը մեր նախահարց նուիրական առանգութեան հիմնական սկզբունքն ըլլալով քրիստոնէութեան ալ հիմնական վարդապետութիւնն է : Յայտնի է որ Քրիստոս իր վարդապետութիւնը ինք չըրեց, այլ անոր գաղաղիքը միմիայն իր սիրելի և հանճարեղ աշակերտին յայտնեց, պէտք է գիտնալ նաև որ Քրիստոսի բուն վարդապետութիւնը ոչ թէ լոկ աւետարանաց, այլ գլխաւորապէս Յովհաննու Յայտնութեան մէջ կը կայանայ : զոր Յովհաննէս իսպառ մտածի և այլաբանութեանց մէջ թաղեց, վասնզի կայաւորութեան միջեւանդ ազգաւորութիւնը չպիտի թողուր որ թագուէ գիտութիւնը յանկարծական արտաքսածութիւն մը ունենար և անոր հրաշալի և ճշմարիտ վարդապետութիւնը ի ժաման իր նպատակին համէր : Կնոթը միայն կրցաւ սակայն այն ատեն Յովհաննու Յայտնութիւնը բառ առ բառ լուծել, իրօք Կնոթը իր բուն բառով Միտքն է, Բանն է՝ որ իր գեղեցնային զօրութեամբ գիտակրօնական դարուց աւանդութիւնները ամփոփելով Համացոյց մը եղաւ Նախապատճառին և անոր ստորագրեաց բացատրութեան :

Վի ՏԸ ԺԷՂԻ ԳԵՐԸԻՆ մէջ Ուրնանի նկարագրած պարզ և յուրա ֆրիստոյը, որ մարմարեղէն խաչաւորութենէ մը անդին չ'անցնիր, և այդ ֆրիստոսի շուրջ պատող անձանց լոկ միամտական երեւակայութեանց կը վերածէ ֆրիստոսի

արժանի բան մ'է : Վանք մը՝ որ դպրոց չունի մանուկներ կը թելու և մամուլ չունի գոնէ ինքզինքը կը թելու համար, վանք մը՝ որոյ ձեռքը և միտքը ապարդիւն և ամուլ կը մնան, ինչ բանի կ'օգնէ այդ վանքը, ինչ բանի օգուտ կընէ, մեր խելքը Հասնիր : Եթէ մենակեցութեամբ և անձնուրացութեամբ միմիայն հանդերձաւով զբաղել է միաբաններու գործը, յայնժամ ազգը պարտաւոր չէ զիրենք անուցանել, վանքը իր ընծայներով պարգաւել, և պաշտօնի կանանցներու տիկնայց և աղջկանց պէս զիրենք հոն ձրիապէս ապրեցունել : Մենակեցութիւնն ու անձնուրացութիւնը լերանց խորհներուն մէջ կըլլան և այդ երանելի կեանքով ապրողին ալ ճշմարտ անունը կը տրուի Ուստի Արմանի միաբանութիւնը իր սկզբանց և պարտաւորութեանց համապատասխանող ընթացքի մը մէջ չգտնուիր : Ազգային ձեռնհաս ժողովոց և մանաւորաբար Սրբազան Պատրիարք Հօր ոչ ազգաւորութիւնը կը հրաւիրեմք և իր լրագիր, որոյ պարտաւորութիւնն է բողոքել, հրապարակել և առաջարկել, կ'առաջարկեմք որ յանուն ազգային պատուոյ՝ Արմանի վանքին փրկութիւնը կատարուելով օրինաւոր պատիժ տրուի, և այնուհետեւ ամեն վանքի մէջ աշուրջ և իրազօր վերակացուներ կարգուին վարչութիւն կողմանէ, որ զէպի միաբանք օտարութիւնը պարտաւորութիւնը յարգելով ազգին համար տախտակ, ուսանել և ուսուցանել, կարգուի և զրեւ, դպրոցներին ծաղիկեցնել, հանգեաներ և զիրքեր հրատարակել, ժողովուրդը կը թելու և հովուելու կերպերը սորով և վերջապէս կրօնական պարտաւորութեանց մէջ ուղղելովաց ըլլալ :

Քաղաքի ազգային երես ժողովը այս շարքով ու նիստ ընելով վարժարանաց խնդրոյն վերջնական լուծման վրայ խորհրդակցել է և եթէ մեզի պատմութեանց օտոյգ է, որոշուէր է որ ազգային սնուկէն 100.000 զուրուշի գումար մը յատկացուի նախապատրաստական վարժարաններու համար : Զատ ուսումնարան մ'ալ պատրաստուի՝ նախապատրաստական վարժարաններէ ելնող և ուսումնարան երթալ ուղղաշակերտաց համար, որոնք թոշակ պիտի վճարեն և սովայն (հարկաւ աղքատ տղայոց համար) ազգային սնուկը տարեկան 50.000 զուրուշի գումար մը պիտի վճարէ ուսումնարանին :

Ասոք ամենը լաւ, ասկէ վերջը եթէ ասկէ ազգի որոշում մ'ալ տրուի, այն ալ լաւ, սակայն խնդիրն այն է թէ կրկին մեր գիտցած գաղափարներով գոհ պիտի ըլլուի, թէ պատ-

մանջեական յիշատակն ու աստուածաճշուն առաջին և զխաւոր պատճառը, Ռոմանի այդպէս ֆրիստոսը կըսեմք, մինչև հիմա անածողին ծիծաղը կը շարժէ իրողութիւններն ու պատմութիւնները իրենց պարզութեամբ և գրուածին պէս ըմբռնելը գեւ շատ խելացիութեամբ լեցունել պիտի տան միշտ իրենց ըսածէն իրենք ալ բան մը հասկնալով : Գիտենք որ Ռոման բազմահմուտ և գիտուն մարդ մ'է և սակայն իր երբայագիտութիւնը միշտ ամօթով պիտի մնայ իր գլխին մէջ, քանի որ երբայեցւոյ լեզուն միայն սորվեր է և ոչ թէ տառերուն և անոնց շարքին մանրամասն նշանականութիւնները :

Գանք մեր խօսքին, Յովհաննէսի՝ երկնայ մէջ տեսած աթոռը, որուն բաղադրեք 24 աթոռներ և որոց վրայ սպիտակազգ հոտ և պսակազարդ 24 երեցներ կը բազմին, կազմուի Աֆային և Օմէկային և Ենոքի Ալեքիին ու Թաֆին համապատասխաններն են : Եղիպտոսի քառեակին և եռեակին միութեամբ՝ երեք անգամ առաջարկուող և չորսի ձևին տակ երեցող տիեզերական նիւթին կը համապատասխանեն՝ աթոռին առջև կեցող եօթը բորբոքած հրոյ Լամպարը, որոնք Աստուծոյ հոգիներն են կը յաւելու Յովհաննէս : Ալ ուրիշ մէջը և բողոքողը չորս կենդանիներ կան : Առաջին կենդանին առաւել կընմանի, երկրորդը ջուրի, երրորդը մարդու երեսի և չորրորդը թռչող արծառի : Գառ եակ ձեռով ներկայացու-

կառնելի տեսլիքն բրոկրամին տրամադրած ուսումները իրապէս և ստուգապէս գիտցող և անհրաժեշտ կարող դասաւանդներ պիտի հայթայթուին : That is the question!

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ամիսէ մը հետէ Կ. Պօլսոյ մէջ եղած պայտօսեցեալութեան տագնապը՝ որ թագուռ կերպով կը տիրէր վախճան առաւ վերջնապէս խայրէտոտին և Գարաթօտօրի բաշաներէն պաշտօնականութիւնը : Այսպէս Արիֆի բաշա Մեծ—Վէլիբի և Սալիֆի թաշա արտաքին գործոց պաշտօնեայ կը կոչուին : Որքան ալ անհաճոյ թուի առաջնոց այս յանկարծական անկումը, այնքան ալ յուսալի կրնայ ըլլալ որ խաղաղ օրերը վերադառնան այս վերջնոց ի պաշտօնեայութիւն վերակոչմամբ, վասնզի արդէն երկուքին ալ խաղաղասիրական ընթացքը հանրածանօթ է, ընթացք մը՝ որոյ այնքան պէտք ունի Տաճկաստան, որքան կրնայ ունենալ բազմօրեայ հիւանդ մը առողջութեան :

Արեւելեան—Բուսթի անքնդհատ կերպով պարպուելու վրայ է Ռուսաց կողմէն : Տօնաւորօք—Քօրսաքօք իշխանը պատուէր տուած է բոլոր հրամանատարաց որ մինչև Յուլիս 26 զօրախմբերը հարկ է որ մեկնած ըլլան ի Ռուսիա : Պաշարման գնդին հրամանատարը Ալէքս. Բաշային գրաւոր կերպով կը հաղորդէ թէ Օգոստոս 1ին Բուսթիի հողին վրայ երբէք Ռուս զօրական մը անգամ չպիտի մնայ : Վեց հատ մեծ շոգենաւք Պուրկազի նաւահանգիստը կեցած՝ երկրին մէջ մնացող վերջին զօրաբաժինները կ'առնեն :

Պուլլարիոյ իշխանը՝ Սօֆիա հասնելուն պէս փութաց իմացունել իւր գահակալութիւնն առ Միլան իշխան Սերպիոյ, վերջինն ալ հեռագրով շնորհաւորութեան ուղերձներ ըրաւ և միանգամայն իմացուց թէ, Գնդ ապետ Սաֆա կրուիք Սերպիոյ քաղաքական գործակատար և ընդհանուր հիւպատոս կոչուած է ի Սօֆիա : Ռուսական դաշինքին բազմաթիւ համեմատ, զինուորական պայմանագրով թիւն մը պիտի ըլլայ Սերպիոյ և Պուլլարիոյ մէջտեղ :

Սարկապուրի մարդիքը՝ անգղիացի երբայական ընկերութեան իմացուց թէ, Թուրքի կառավարութեան խստիւ պատուէր ուղղուած է, որպէսզի տեղւոյն հրէից եղած բռնութեանց և հալածանաց անմիջապէս առաջն առնուի :

Տէյլէ Նէ—Ղարաբիք բազմաթիւ նամակներ կը հրատարակէ անգղիացի արանց և տիկնայց ստորագրութիւններով, որք չեն ուզեր բնաւ

տիեզերական նիւթին այս նմանութիւնը՝ գիտաւորական շրջանին համագիտարանին այլաբանական կրկնումն է, որ ամեն բան գիտութեան այսինքն բնութեան պարփակուած դաղտնի զօրութեան ամենակարողութիւնը կը հասկցունէ : Տիեզերական գործիչին չորս յատկութիւնք (բուժում, լծանձրացում, շերտացում, ցրտացում) քիմիա—ֆիզիքական, ելեքտրա—մագնիսական կայլ գիտութեանց սկզբունքը կը հիմնադրեն, և ասոնք իրական և բուն գիտուն եղող Յովհաննէս աւետարանիչին յաջորդները լինի կերպով կը գործէին տիրող դարուց ոգւոյն վախով : Գիտակրօնական շրջանի սրբապաշտի մէջ մէկին ստորաբաժանման դաղտնիքը լուծելէ ետեւ հետեւեալ չորս յատկութիւնք կընկարուէին :

1. Ետքման արտագրութիւնն եղող կեանքը որ ձևոց յաջորդութեամբ և կատարելագործութեամբ կրնայ պահպանուիլ :

2. Մշտնջենական շարժման գիտութիւնը, որ կենաց գիտութիւնն է :

3. Հաւասարակշռուել զօրութեանց ուղիղ կշիռը որ այս գիտութեան բուն առարկան է :

4. Երկրութեան խանդարումով ըլլալը, որ ծննդեան մահ և մահուան ծնունդ ըլլալուն դաղտնիքն է :

Տիեզերական նիւթին կամ ընդհանուր կենաց առաջին սկզբունքը՝ գոյացական շարժում մը կամ, ջնդեղի վիճակի մէջ, մշտնջենի և հիմնապէս շարժեալ և շարժիչ անտեսանելի և անշո-

որ վէսթմինսթըր Ապէլի մէջ լուի Նարոյէոն իշխանի յիշատակին համար արձան կանգնուի :

ՆԱՐՈՂՈՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻ

ՅՈՒՂԱՐԱՄԱՌՈՒԹԻՒՆԸ

Լինտրա Ժ. 6. ր. 55 իրիկունս Առաւօտեան ժամը 7էն սկսելով երկաթուղեաց մասնաւոր կառավարները տասն վայրկեանն անգամ մը Զայրէքըրթ կը հասնին մինչև Գհասարակ օր : Հաղար հինգ հարիւր ռուսկաններ կը հսկեն :

Առաւօտեան ժամը 10ին Վիկթօրիա թագուհին և Պէմթրիս իշխանուհին՝ Կայսրուհւոյն կողմէն կ'ընդունուին : Թագուհին և իշխանուհին՝ Վինտսօր պարտէզէն անհուն մանիշակեայ փունջեր և քամիկայէ շինուած պատկեր կը բերեն : Դադաղին վրայ սփռուած են այս ծաղիկները :

Ժամը 10¹/₂ին կը հասնին Կալլէսի իշխանը և իշխանուհին, Էտիմուրկի և Քօնսթի դուքսերը, Լէօօրտ իշխանը, Քէմպրիճի դուքսը, Թէգքի իշխանը, Շուէտի արքայազուն իշխանը, Ալմանիոյ, Ռուսիոյ և Տանիմաքայի գեապանները, Նոյնպէս նաեւ բազմաթիւ Անգլիացի ընդհանուր պաշտօնակալք : Իշխաններն ու դեսպանք փառաւոր համազգեստներ հագած են, և իրենց բազուկին վրայ կը կրեն սեւա չէֆներ : Սուգերով պատուած Կալլէսի իշխանուհին սպիտակ վարդեր և մանիշակէ հիւսուած մեծ ծաղկեփունջ մը կը կրէ ձեռքին մէջ :

Սոյն վայրկեանին զօրախմբերը հասնելով Քէմտըն—Հօուզի գէղն եղող մարգագետնին վրայ կը դիպուին : Զօրախմբը կը բաղկանայ 3 արքայական հրաձիգներու վաշտերէ, 4 ռազմիկ վաշտերէ, 2 պաշարողական հրաձիգ վաշտերէ, 4 գունդ իրլանտական նիզակազէն արքայապահայրութիւն և Կալլէսի երկրին Կրէսթիէներու 236-րորդ զօրագունդէն : Նիզակազէնք իրենց կապտախառն կարմրերանգ համազգեստով, կանաչագոյն փետրազարդ գլխարկով և բոցափայլ սուսերով Քէմտըն—Հօուզի ընդարձակ պարտէզին մէջ կարգաւ կը շարունակեն :

Երաժշտաց նուագարանք սեւթոյր քրէմներով ծածկուած են : Անհամար բազմութիւնը խնամ է հանապարհաց և մարգագետնից վերայ : Սգակիր կառքերու չորս խումբեր վանդակապատին առջև կը կենան և լայնատարած գետնայատակի մը վրայ հազարաւոր հանդիսատեսներ կ'առնեն : Դղեկին մերձակայ բազմաթիւ շէնքեր սգանիշ եռագոյն դրօշակներով ծածկուած են :

Սէնթ—Մարի կաթօլիկ եկեղեցիին և բողո-

չափելի գոյութիւն մ'է, և որ նիւթապէս բեւեռականութեան երեւոյթներով կը հաստատանայ : Այս է գոյութիւն անվերապելի, անեղծանելի և անմահ :

Նախնեաց չորս տարերքը՝ տիեզերական մագնիսին բեւեռական չորս զօրութիւններն են և գիտակրօնական համագիտարանին չորս կենդանիք՝ վեցական թեքով կը ներկայեն զանոնք այսինքն կրկնակի երեք թուով : Հաւասարակշռութեան հմուտ Յովհաննէս՝ երբ իր Տէրը երկնից մէջ Աստուծոյ աթոռին վրայ կը բարձրացունէ, գիտութեանց ունենալիք հսկայաքայլ յառադրիմութիւնը կը մարգարէանայ աշխարհի, սակայն իր մութ լեզուն, մութ տեղէ մը քաղելով, Նոյն ձևը կը պահպանէ : Աւետարանաց դաղտնի հրաշարիքը՝ որ երեք բառի մէջ պարունակուած է և որ 3 վարդապետութիւն և երեք դերիշխանութիւն հիմնարկներն, Կնօսքիկներու յայտնի էր : Ասոնք այդ բառից սա անունները կուտային Հիլէ, Բոնիէ, Կնօսիս : Իսկ երբայցիք Աղիահ, Իէղիբահ, Պրիահ կը կոչէին զանոնք : Այս բառերը կրօնապէս ըմբռնելով ոգիներու յառաջնութեանցութեան կարգերը կամ աստիճաններն, իսկ գիտապէս ըմբռնելով, թէ և միջին և բազմաց դժուարալոյծ, տասնեութեանց դարու Եփէ, Բրիսթէի, Գալէնտի, Բուսթէֆօրթիին և Լափուաղիիէի թթուածինը, Ամսաժինը և Մահաժինը կամ Ագօթին են :

(Պիտի շարունակուի) :

քական եկեղեցիին զանգաւանները շարունակ մահադոյժը կը հնչեն : Վրան երեք հատ սև Ն ստուերով նպիտակ չուխայով պատուած վանդակապատին առջևն անցնելով Գաղղիացիք գլխարկին կը հանեն, մինչդեռ Սնդիխայիք հետաքրքրութեամբ կ'անցնին անկէ :

Ժամառ ժամկը հասնին երեսփոխանութիւնը՝ ձեռքերն պատկեր կրելով, որք կուգան փարիզէն, Լիլէն և Գուրգօնէն : Ասոնց մէջ կը տեսնուին մանաւանդ Պօնաբարթեան մամայ երեսփոխանութիւնը և ապա ճերմակ պուշայով և բազուկին վրայ քրէմով դարձեցականներ և գործաւորներ որոց կ'առաջնորդէ Պ. Ժիւլ Սմէկ :

Մանիշակեայ տոմսեր ցրուեցան այն ամեն Գաղղիացոյ որք կ'ուղէին յուղարկաւորաց խմբին մէջ մտնել :

Քէմտըն—Իլսաի մէջի Գաղղիացիք ամենքն ալ ճերմակ հագուստներ և ճերմակ փողկապներ և Անգլիացիք սև շէֆիւսներ հագած են : Տիկնայք սգաւոր են : Ամեն ոք մանիշակեայ փունջիկներ կը կրէ ճարմանդի ճեղքին մէջ :

Բազմաթիւ տիկնայք յուղարկաւորաց մասնակցելու կը պատրաստուին : Ասոնց մէջ կը տեսնուի օրիորդ Սարա—Պէրնարթ, որ խիստ սրտաբակ կ'երևի :

Էօթէնի կայսրուհին առաւօտեան ժամը երեքին տեսաւ իւր որդւոյն դադաղը : Ամբողջ գիշերը ծննդիւր կեցած էր նա՝ Քէմտըն—Հօուզի մեռելակիր դահլիճին մէջ կանգնուած խորանին առջև : Առաւօտեան ժամը 7ին պարտաւորեցան զինքը յանկոյտն տանել : Վիկթօրիա թագուհին քովը կեցաւ մինչև այն վայրկեանին՝ ուր թնդանօթին առաջին թնթիւնը մարմինին եկեղեցի տարուելու ժամը խմացուց :

Այս միջոցին Թագուհին և Պէմթրիս իշխանուհին գէպի պարտէզին մէջ տաղաւարը կը դիմեն ուրկէ կրնան բազմութեան անցք տեսնել : Արքայական ընտանեաց բազմութիւ տիկնայք կուգան ասոնց հետ միանալու :

Ժամը 11ին թնդանօթը՝ մարմինին վերնալուն նշան կուտայ և յուղարկաւորաց խումբը հետեւեալ կերպիւ կարգի կը մտնէ :

Նախ և առաջ արքայական հրաձիգ զօրաց նուագածուաց խումբը կը բայլէ տխուր նուագ եղանակելով, ապա նիզակազէնք կուգան նիզակնին գլխի վայր բռնած, յետոյ Վուլփիզի զինուորական դպրոցին աղնուական ուսանողք կը հետեւին՝ հրազէնքնին վար բռնած : Ասոնք պիտի հատուցանեն զինուորական վերջին յարգանքը իրենց նախկին աշակերտակցին : Անմիջապէս կուգայ Սուրբ վարդի եպիսկոպոս մօնսիէնիօր Դանիէլ սուրբ խաչէն և բուրվաւ կողդ գպրներէն առաջնորդուած : Ասոր ետեւէն է իշխանին մարմինը՝ որ թնդանօթակալի մը վրայ զետեղուած է, զոր կը քաշեն ութ սև ձիեր : Դաղղիական և Անգլիական դրօշակներով պաշարուած դադաղը ծաղիկներու տակ թաղուած է : Դադաղին վերեւ, որոյ կռթնած են երկու զօրականք, կը տեսնուի Վիկթօրիա թագուհւոյն ընծայած հոյակապ պսակը : Դադաղին երկու կողմէ կ'երթան հրաձիգ հեծեալազօրներ որոց թուրը օդին մէջ կը շողայ :

Դադաղին ետեւէն կը բայլէ իշխանին ձին որ սեւերով ծածկուած է : Յետոյ կուգայ Իւլմէն՝ իշխանին յառաջնութեան ձիաւորը՝ պալատական զգեստով :

Ասոնց կը հետեւի յուղարկաւոր խումբը, հետեւեալ կարգաւ :

Նախ բրէնս Ժէրօմ Նարօյէոն և իւր որդիքը և ապա Անգլիա եկող ընտանեաց ուրիշանգամբ : Յետոյ կը բայլեն ծովապետ Տիւրբերթ, որ Պուրկուան, Թրէվիլի դուքսը, Ռուէ, ֆօլ տը Գասանիաք, Գոյի մարքիզը, Ժանվիէ տը Լա Մօթ, Լալօ, Մօրիս Բիշար, Գօնոյ, տօքթէօր Էվանս, Ժէնէրալ Ֆլէօրի, Կրամմօնի մարքիզը, Մուշիի դուքսը, Հօսման Պարօնը, Գօրվիլար Բիէթրի և այլն :

Անդ են նաեւ պատերազմի պաշտօնեայ Սթանլէյ և Խեւ մը անգլիացի սպայներ որք կը կրեն կարմրագոյն պատմութեաններ, իրաններուն վրայ խաչաձև երեքներ և ճերմակ ու կարմիր գոյններով փետրազարդ եռանկիւն փեղցրներ : Շա-

տեղը փրկվելի պատուանշաններ և Պատույ Լե-
զէնի խաչեր կրկրեն :

Ասոնց ետեւէն կուգան՝ իշխանին գտնուած
հրաձիգ վաշտին սպաները , արքայական հրա-
ձիգ խմբին գունդերը որոց նուագարանը Պիթ-
լովնի տիրապէցելի նուագը կ'երգէ :

Յուդարկաւորաց բազմութեան մէջ կը տես-
նուին Գաղղիացի Սէնաթորներ և երեսփոխան-
ներ , պետութեան զօրապետներ , դեսպանա-
դէտներ , Սինգիական բարլամէնթոյի անդամ-
ներ , արդէն յիշուած երեսփոխանութիւնը :

Տիկնայց մէջ կը տեսնուին մատամ Մարեշալ
Գանրօպէր , մատամ Ռուէ և իր գաւառը և
մատամ Ֆլէօրի :

Անգլիական զօրաբանակը կը ներկայանայ զա-
նազան պիտուորական կարգաց վերաբերող սպա-
ներու կողմանէ : Իսկ Գաղղիական լոկ մէկ հա-
մազգեստ կ'երևի , և այս ալ Նաբոլէոն Պոնա-
բարթի կայսերապա՝ դունդին համադրեստի
ձեւն է զոր կը լընէ Շըվէ հինօրեայ զօրավարը :

Բաղմաթիւ հրաձիգ գունդեր յուզարկաւո-
րաց բազմութիւնը կը ծածկեն :

Ժամը ճիշտ լին բազմութիւնը վանդակա-
սրտին առջև կը հասնի :

Վայրկեան առ վայրկեան թնթիւններ կ'ար-
ձակուին , թմբուկներու դռնիւններու հետ
միասին , բազմութեան անցքը մէկ ժամ և մէկ
քառորդ տեւեց :

Քիչ մարդ կրցաւ փոքրիկ եկեղեցւոյն մէջ
մտնել :

Հոն կը տեսնուին մասնաւորապէս Ռէնն Ժէրօմ
Նաբօլէոն և իր սղայքը , Մաթիլա և Միւրատ
իշխանուհիք , Պասանօյի դուքսը , Ռուէ և բազ-
մաթի Սէնաթորներ և նախնի պաշտօններ :

Օրիորդ Նիլսն , Տիկն Գաթէր Պարօնուհին
օրիորդ Սէն-Սայէն թաղման արարողութեան
երգեցողութեան մասնակցեցան :

Մարմինը մատուռ մտած առանձն Վոլփի ու-
սանդը երկու կարգի բաժնուելով երեք ան-
գամ հրացան կը պարպեն :

Թնդանթներ ևս արձակուեցան երգեցողու-
թեան ժամանակ . վերջապէս եռեակ թնթիւն
մը արարողութեան վախճանը հնչեց :

Ձայղը ընթերցեց թիւը հարիւր հա-
զար անձի կը հասնի :

Հետեւեալ գրութիւնը հրատարակելու ինք-
րանօք ուղղուած է առ մեզ , իբր ազատութիւ-
նը յարգող լրագիր՝ ստիպւած եմք հրատարա-
կել զայն ընթերցողաց թողով թէ քննադա-
տին քննութիւնը և թէ հեղինակին գործը
բաղդատելով դատել , և իբր խմբի իր կը պար-
տաւորեմք ըսել որ , ինչպէս որ եւրոպական
ազգաց քրական շրջանակին մէջ առաջին տեղը
կը զուէ քննադատութիւնը , նպաստաւոր կամ
աննպաստ , հարկ է որ մեր գրականութեան
մէջ ալ մուտ գտնէ , վասն զի սա է առաջին
քաջալիք , առաջին ուղղիչ և առաջին դասա-
տու գրական մարդոց :

Խմբագիր , դիտէք որ անաչառ բանադա-
տութիւնը ազատ է և իր օգուտներն անուրա-
նայի , ուստի կը խնդրեմ որ ձեր պատուական
թերթին մէջ տեղ մը շնորհէք ներկայիս :

ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻ

ԻՐԱԿԱՆ ՎԷՊ ՄԸ

Պ. Նշան Միրզայի սոյն վէպին առաջին ֆոր-
ման հրատարակելու կարծելով որ Տօբայի
հեղինակը քանի մը տարուան միջոցին վիսպա-
նութեան արուեստին մէջ յաջողքայլ մը առած
է , մեծ հետաքրքրութեամբ կարդացինք զայն .
և տեսնելով որ այս անգամ աւելի ձախող վի-
ճակի մը ենթարկուած է նա , ստիպուեցանք
իբր զորք համառօտիւ բանադատել և զինքը
օրինաւորութեան կողմէ , ուստի իր ուշադրու-
թիւնը կը հրաւիրենք յետագայ տեսութեանց :

Թէ պարտաւորեալ մը նկատումք ինչ գի-
տողութիւն ըրին ոմանք , գլ. Ա. երես Գ. —
Դիւայ մը վերնադիրը պէտք է որ նոյն գլխին
բովանդակուի համապատասխան , ինչպէս
գրքի մը յառաջաբանը նոյնին ուղղի և չէ թէ
վերջարանին :

Նկարագրուած պարահանգէսը 1869ին տեղի
կունենայ երես 2. տող 34. — Թշուառ
Տօբայի վեպի արարին է այս , հեղինակը կը-

հասկնայ ինչ ըսել կ'ուզենք

« Փանտիւնափաթի երաժշտական խումբը և
այլն » , երես 3. տող 11. — Իզմիրի մէջ Փանտի-
ւնափաթի խումբով պարահանգէս մը եղած չէ
երբէք , այլ գլխաւորապէս զօրանք , գիշերային
զուարճութիւն և այլն :

« Թէ և պարերգութիւնը սկիզբ առած է՝
այսու ամենայնիւ երաժշտութիւնը սկսած էր
զուարթ և անորձեղի եղանակներ նուագել » ,
երես 4. տող 20. — Պարահանգէսներու մէջ պա-
րերգութեան , յառաջ ուրիշ եղանակ չեն նուա-
գէր , այլ պարը վաղ մը կ'սկսի , իսկ պաշտո-
նական և վեհապետական պարահանգէսք պաշ-
տօնական մը կը բացուին :

« Այսպէս շուրջ յիսուն վայրկեան պարելէ
ետեւ » , երես 6. տող 27. — Անկարելի է պարեր-
գութիւնը քառորդ մը կամ 20 վայրկեան կը-
տեւէ , և պարող մը 10 վայրկեան չ'կրնար դի-
մանալ ընդհանրապէս :

« Զոյգ քառեակներ կազմելով խումբ խումբ
գաւթիկ պարել սկսան » , երես 6. տող 22. —
Գաւթիկ համար քառեակ չ'են կազմեր , այլ
լաւիշի , պարահանգէս և պար նկարագրելու
համար հեղինակը կը պարտաւորէր դէպք անգամ
մը պարահանգէսի մէջ գտնուիլ և պարել զիտ-
նալ :

« — Մտնան , երջանիկ ես , — Աստուծոյ չափ » ,
երես 6. 7. — Քաւ լիցի , Աստուած , այս գերը-
նական էակը , արարածոց արարիչը , բարիքն և
չարիքն ստորակարգելով չ'է . Աստուած մարդ-
կային կրից են : ակայ չ'է , այլ անոնց հեղինակը
և մարդ մը անոր չ'կրնար հաւատարիլ , երջան-
կութիւն և ապերկանութիւն մարդուս կը պատ-
կանի , Աստուած երջանկութեան արարիչն է :

« Երբեք գրիչ կատարէն » , երես 10. տող 3.
4. — այս խօսքը սիրոյ այսինքն Աստուծոյ մար-
դուս արտին մէջ դրած նուիրական կայծին
դէմանրու և սոսկալի թշնամանք մ'է , կատա-
ղօրէն չ'սիրուիր , այլ եռանդեամբ , տենջիւ :

« Հարկ էր ճառերու և աշտանակներու վայ-
րոյ մամ վառել » , երես 10. տող 33. — Արդեօք
ձահերո՞ւ ըսել կ'ուզէ , չենք գիտեր . ճառ՝ կը
նշանակէ աստեարտութիւն , խօսք թերեւ այս
տարագրական անիծեալ և այլանդակ սխալ մը
եղած լինի :

« Պ. Խ. Արշակեան , որ Բէթրաքիի քեռայրն
է . Պ. Պերոզ , որ Բէթրաքիի եղբայրն է » գլ.
Բ. տող 4. 6. Պ. Ռաֆայէլ և Հրանտ առանց նը-
կատողութեան առնելու որ հայրերնին (Խ. Ար-
շակեան) իրենց մարդարաց հետ և այլն . տող 23
24. — Բէթրաքիի ճիւղերեան անունը կրող անձը
ժանօթ է իզմիրաց , նա այս անուններով ոչ
քեռայր , ոչ եղբայր և ոչ ալ քեռորդ ինքնու-
նեցած է . սոյն անունափոխութեանց պատ-
ճառը չ'հասկցանք , ինչո՞ւ հեղինակը կը պահէ
զանոնք , քանի որ պիտե՞նք բուն անունը նշա-
նակած է :

Ինչպէս բոլոր արդէն , մեր բանագատու-
թիւնը խիստ համառօտ է . վասնզի եթէ վէպն
ամեն ինքնութիւնները նշանակէինք , այն տան
պիտի ստիպուէինք մէկ ֆորմայի համար երկու
ֆորմա գրել : Իսկ Պ. Նշանի հայերէնի մարտ-
թիւնը և ոճին յատկութիւնը գովելէ ետեւ , կը
յաւելունք որ Պ. հեղինակը վէպ գրելէ յառաջ
կը պարտաւորի քանի մը ընտիր վէպեր իզմի-
տելու , սա թէպէտեմ որ ամեն բանէ յառաջ
օտար լիցու մը սորվել և քանի մը տարիներ
ուսման ծառայելու պէտքը չ'մոռնայ , և երբ
որ մը վիսպարանութեան նորէն սկսի , Բասինի սա
խօսքը յիշելով , « փաստարան անցնինք ջրհեղե-
ղին » , տաղտուկ և ձանձրալի առաւելարանու-
թիւններէ զգուշանայ , և որ աւելին է , կոյտե-
րու բերանը դրած խօսքերուն և երիտասար-
դաց արտասանած բառերուն չափը կըսէ և հա-
մատութիւնը մեծարէ :

Ասկէ զատ սոյն իրական վէպին պարզ , անկա-
րելու և խիստ հառաքալ նիւթը իզմիրացոց ար-
դէն ժանօթ լինելուն համար օգուտ մը չ'մոտա-
կարարելէ զատ թերեւ զայն թակուղութեան տեղի
տայ

Նաեւ երբ մէկ կողմէ Պ. Միրզայի անյաջողու-
թեան վրայ կըցաւինք կարեկցաբար , միւս կող-
մէ ուրախ ենք տեսնելով որ տեսակ մը անկար-
գութեան տարրեր սոյն տղայական և անփորձ
վիսպարանութեան մէջ Դի-Յաւի գերեր կ'ստա-
նան :

Կ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Իշմիր , 19 Յուլիս 1879 :

Փառաքին ընդհանուր դատախազի նորըն-
տիր փոխանորդ մեծ . Չարհ Էֆենտի Տիպէր ,
որ քանի մը ամիս ի վեր իւրապա կը գտնուէր ,
այս շարթու. Զ. Ս. Անիա համեմով իր պաշտօնին
գլուխ անցաւ :

— Անցեալ շաբաթ օր և այս երեքսարթի վա-
ճառականներէ , սեղանաւորներէ և ընկերու-
թեանց գլխաւորներէ բազմութիւն մը գումա-
րեցաւ ի դուռն կառավարութեան՝ պղնձ գրու-
մի խնդիրը քննելով՝ վերջնական որոշում մը
տալու համար : Երկար խորհրդակցութիւններէ
ետեւ , որոշուեցաւ որ պղնձը կրկին շրջաբերու-
թեան հանուի 40 փարանցը 10 փարայի , ար-
ժողութեամբ , որ ըսել է իր պաշտօնական ար-
ժողութեան 75 0/0 կորսնցուց : Այս որոշումը
իտարէ և Պէլէտիէ ժողովոյ կողմէ վաւերաց-
ուելով հասարակութեան ծանուցուեցաւ , թէ
այս պայմանաւ պղնձը դրամ՝ քննուող օրի-
նաց տրամագրութեան համեմատ պիտի պատ-
ժուի : Դժբաղդ տար կը տեսնուի որ այս որո-
շումը անբացառիկ կերպով չկատարուի զեռ :
Ահամարայի պարտեղը առաջին պատիժը կրից
գողուելով , իր թարիֆան մեծալիք ստակի վրայ
հիմնուելու և պղնձը քննուող ուղեւորն համար
Սակայն ուրիշ տեղեր ալ կան որք Ահամարայի
ընթացքին կընտանին և անպատիժ կը մնան :
Որոշման անբացառիկ գործադրութեան համար
կառավարութեան խտտութիւններ ձեռք առ-
նելը անհրաժեշտ է :

Ս. Զ. Դ.

ՏՕՐԱՅԻ ՀՅՎԻՆԱԿ Պ. Նշան Միրզա , որ ծանօթ
է գրական տղաքիցին վրայ , երկրորդ անգամ
նոր հրատարակութեան մը ձեռնարկած է , առ
որ ընթերցանէր ազգայնաց համակրութիւնը կը
հրաւիրեմք ի քաջալերութիւն երկատարող հե-
ղինակին և յօժանգաւութիւն ազգին մէջ դրա-
կանութեան ծաւալման :

Ահա տիկ հրատարակութեան պայմանքը .

Պ. Նշան Միրզայի հեղինակութեամբ իրական վէպ
մը յանձնուած է տպագրութեան Ֆորմա առ Ֆորմա
հրատարակուելու պայմանաւ . սոյն գործին ընտրու-
թեան եւ քաղցրութեան համար աշխատութեան խնա-
րած զէ : Բաժանորդագրութեան բացուած է հետեւեալ
պայմաններով .

Ա. Խաբարսեղի ֆորմայի , սոյն 10 կրեպի գլին և
2 դուրալ :

Բ. Բաժանորդը կը պարտաւորի 3 ֆորմայի համար
յառագայտի վճարել 6 դուրալ : Եւ երրորդ ֆորման
ստացած միջոցներն յաջորդ 3 ֆորմային համար նոյն-
պէս 6 դուրալ : Եւ այս կարգու պիտի շարունակեն
վճարել մինչեւ տպագրութեան աւարտը :

Գ. Տասն բաժին գտնուիլ մէկ բաժին ձրի կը տրուի :
Հեղինակը շնորհապարտ պիտի համարի ինքզինքը
եթէ արդոյ Հատարակութեան սոյն գործին տպագրա-
կան ծախքը գեր գոցելու չափ օժանդակի իրեն :
Բաժանորդ գրուի փափաքողը կրնայ դիմել առ Պ.
Նշան Միրզա , եւ առ 3. Արիկեան ի Սիւլիսի խան ,
վերի յորի , իւր 17 :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Արիւն . — Ղ. Նիւթը վերջին գլխերուն հետ
բաղդատելով չէքին 5 դուրալ իր արժէքը կոր-
սնցուց : Սմեր 61 կողով ծախուելու . վերջին
շաբթուս մէջ ի գին 132—140 :

Բալամու . — Ղ. առջ կը ինտուսի հրապարակի
վրայ : Անգղական տեսակէն բանուած ծախ-
ուեցաւ 4000 կնիւղինար ի գին 72—122ի :

ԾԱՆՈԹՅՈՒՄ

Արիւն Տաթառի անուանի ուսուցիչը քաղա-
քիս մէջ նոր գպրոց մը հիմնելու ձեռնարկած է
« Արեւելեան առեւտրական դպրոց » անունով , որ
պիտի բացուի յառաջիկայ Սեպտեմբեր ամիս :
Ուսմանց տեղեկագիրը գալ անգամ պիտի հրա-
տարակնմք :

Ազգային հիւանդանոցի փողոցին մէջ 6 թիւը
կրող տունը ծախու լինելով , գնելու գողը կրնայ
դիմել առ Պ. Յովհաննէս Բ. Թոգաթիւեան :

Տեղւորացի ,

Պ. Նշան Գ. Պալեալիս :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԼՈՒՄՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ